- «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրով 10 մարզերի 472 համայնքում կնքվել է 4 793 պայմանագիր: Ծրագրերում ընդգրկվել է 6 285 շահառու (որից 643-ը՝ երիտասարդ, 503-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ): Ծրագրի իրականացման արդյունքում մշակել է 8 076 հա հողատարածք:
- «Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում» ծրագրով 7 ոչ պետական կազմակերպությունների հետ կնքվել է համագործակցության հուշագիր:
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում» ծրագրում ընդգրկվել է 1 925 անմրցունակ անձ (որից 41-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ):
- «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում» փորձնական ծրագրով Տավուշի մարզում իրականացվել է 44 ծրագիր, որոնցում ընդգրկվել է 398 անձ (որից 11-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ): Ծրագրերի շրջանակներում իրականացվել են հիմնականում դպրոցի և մանկապարտեզի տարածքներում պաշտպանական նշանակություն ունեցող ինժեներական կառույցների շինարարական, ճանապարհների հենապատերի վերականգնման, գերեզմանատան ցանկապատի բարեկարգման, այգու ցանկապատի վերանորոգման, ջրամբարի ցանկապատի վերանորոգման, գյուղամիջյան ճանապարհների կոպիճապատման, սելավատարների մաքրման ու ամրացման և ցերեկային լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ:

2. Կենսաթոշակային ապահովություն

Կենսաթոշակային ապահովության բնագավառը կանոնակարգելու նպատակով 2015 թվականին մշակվել են մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-144-Ն օրենքը, ընդունվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին,
2. «Պետական կենսաթոշակի մասին» ՀՕ-1-Ն օրենքը, ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին,
3. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 444-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 357-Ն որոշումը,
4. ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 405-Ն որոշումը,
5. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 199-Ն որոշումը,
6. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 687-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 248-Ն որոշումը,

7. ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N1676-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 346-Ն որոշումը,
8. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 741-Ն որոշումը,
9. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 761-Ն որոշումը,
10. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 786-Ն որոշումը,
11. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 823-Ն որոշումը,
12. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 74-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 856-Ն որոշումը,
13. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 872-Ն որոշումը,
14. ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 273-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 940-Ն որոշումը,
15. ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Ուկրաինայում տեղի ունեցած դեպքերի հետևանքով մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց սոցիալական պաշտպանության մասին» N995-Ն որոշումը,
16. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի «Մասնակցի՝ իր կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջությամբ ստանալու պահանջ ներկայացնելու իրավունք տվող հիվանդությունների (վիճակների) ցանկը հաստատելու մասին» N1070-Ն որոշումը,
17. ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1130-Ն որոշումը,
18. ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 1179-Ն որոշումը,
19. ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1423-Ն որոշումը,
20. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1524-Ն որոշումը,
21. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1564-Ն որոշումը,
22. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1566-Ն որոշումը:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախատեսված՝ կենսաթոշակատուների շրջանում աղքատությունը նվազեցնելու ուղղությամբ շարունակական ծրագրեր իրականացնելու միջոցառումների շրջանակում 2015 թվականի հունվարի 1-ից բարձրացվեցին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը՝ նախկին 14 000 դրամի փոխարեն 16 000 դրամ, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքները. առաջին տասը տարվա համար՝ 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար 500 դրամ (համապատասխանաբար՝ 700 դրամի և 450 դրամի փոխարեն): Արդյունքում նախորդ տարվա նկատմամբ միջին աշխատանքային կենսաթոշակի չափն ավելացավ մոտ 14 տոկոսով 5 000 դրամով՝ կազմելով շուրջ 41 000 դրամ:

2015 թվականի հունվարի 1-ից սահմանվեցին՝ ծերության նպաստի չափը նախկին 14 000 դրամի փոխարեն 16 000 դրամ, հաշմանդամության նպաստի չափերը՝ 1-ին խմբի հաշմանդամի և հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 21 500 դրամ (նախկին 19 600 դրամի փոխարեն), 2-րդ խմբի հաշմանդամի համար՝ 19 000 դրամ (նախկին 16 800 դրամի փոխարեն), 3-րդ խմբի հաշմանդամի համար՝ 16 000 դրամ (նախկին 14 000 դրամի փոխարեն) և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը՝ 16 000 դրամ (նախկին 14 000 դրամի փոխարեն), իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում՝ 80 000 դրամ (նախկին 70 000 դրամի փոխարեն):

Զինվորական կենսաթոշակների չափերը բարձրացվեցին 2015 թվականի հուլիսի 1-ից՝ զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվեց 16 000 դրամ (14 000 դրամի փոխարեն), իսկ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը 1 500 դրամ (1 300 դրամի փոխարեն): Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի միջին չափը նախորդ տարվա նկատմամբ ավելացավ մոտ 15%:

Առանձին կատեգորիայի կենսաթոշակատուների (զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների) սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ 2015 թվականի հունվարի 1-ից Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին մինչ այդ նշանակված 2 կենսաթոշակից մեկի՝ զինվորական կենսաթոշակի փոխարեն նշանակվել է պարգևավճար, որի չափը նախկին կենսաթոշակի չափը գերազանցել է հիմնականում 40-50 տոկոսով: Արդյունքում՝ շուրջ 6 300 անձանց զինվորական կենսաթոշակի փոխարեն վճարվել է դրա չափն էականորեն գերազանցող պարգևավճար: Միաժամանակ, սահմանվեց, որ զոհված զինծառայողի ընտանիքի՝ աշխատանքային կենսաթոշակ ստացող անդամը պարգևավճարի իրավունք էր ձեռք բերում՝ անկախ աշխատելու հանգամանքից: Այս դեպքում վերականգնվել է շուրջ 76 շահառուի պարգևավճար ստանալու իրավունքը:

2015 թվականի մայիսի 1-ից կրկնապատկվել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարի չափը՝ 25 000 դրամից դառնալով 50 000 դրամ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ 2015 թվականի ապրիլի 1-ից քառապատկվել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի այլ վայրերում մինչև 1915 թվականը (ներառյալ) ծնված և Հայոց ցեղասպանությունը վերապրած հայերին ամենամսյա դրամական օգնության չափը՝ 25 000 դրամից դառնալով 100 000 դրամ:

Միաժամանակ կատարելագործվում են կենսաթոշակների և նպաստների նշանակման և վճարման գործընթացները: Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում և այլ պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական համակարգերում առկա տեղեկատվությունների պարբերական համադրումներով և համապատասխան միջոցառումների ձեռնարկմամբ հնարավորինս կանխվում են ոչ իրավաչափ վճարումները և միջոցներ են ձեռնարկվում ավելի վճարված կենսաթոշակների և նպաստների գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու համար:

2. Սոցիալական աջակցություն

Պետական նպաստները 2015 թվականին նշանակվել և վճարվել են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն) սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-231-Ն) 8-րդ հոդվածով նախատեսված սոցիալական

ծառայությունների առանձին ձև: Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն) և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման գործընթացը 2015 թվականին իրականացրել են սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները կամ բաժինները (այսուհետ՝ ՄԱՏՄ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են:

Պետական նպաստների համակարգը՝ որպես ծայրահեղ աղքատության հաղթահարման գործիք, կարիք ունի վերափոխման՝ ընդհանուր աղքատության կրճատման խնդիրների լուծման և կայուն ընտանիքների ձևավորմանն օժանդակելու համար: Սոցիալական քաղաքականությունն ուղղված է սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերից բնակչության արտագաղթի կանխմանը, այդ բնակավայրերի բնակչության սոցիալական ակտիվության բարձրացմանը, որը կհանգեցնի սոցիալական անտարբերության նվազմանը:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ.

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (նախկինում ընտանեկան նպաստ) ծրագիրը կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին, ունի սոցիալական բարձր հնչեղություն:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր, և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը հիմնվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների վրա, վարչարարության բարելավում, տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում իրականացված բարեփոխումներն իրականացվել են ԱՀՌԾ և ԿԶԾ սահմանած ռազմավարական ուղղություններին, ՀՀ ԱՎԾ ամենամյա տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ հաստատված ընտանիքների անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: Որքան մեծ է այդ միավորը, այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

2008 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվեց «30.00», նախորդ տարվա «33.00» անապահովության միավորի դիմաց: Այս մեծությունը պահպանվել է նույնությամբ մինչև 2015 թվականը ներառյալ:

Ընտանեկան նպաստների բնագավառում հիմնական փոփոխությունները կատարվել են 2012 թվականին՝ ընտանիքի միջին ամսական եկամտի կառուցվածքում և եկամտի գործակցի հաշվարկման բանաձևում:

2012 թվականի հունվարից ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմում հաշվի են առնվում նաև զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամյա դրամական օգնությունները, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի

նպաստները: ՀՀ կառավարության որոշմամբ ընտանիքի անապահովության գնահատման բանաձևում եկամտի գործակցի ազդեցությունը մեղմացվել է, որով չեզոքացվել է ընտանիքի միջին ամսական «մեծացած եկամտի» ազդեցությունը:

Այս փոփոխությունների արդյունքում ցածր աշխատավարձ ունեցող ընտանիքները նույնպես ձեռք են բերում ընտանեկան նպաստի իրավունք՝ առավելապես երեխա ունեցող ընտանիքները:

2015 թվականին կատարված փոփոխությունների համաձայն՝ «աշխատանքի շուկայում անմրցունակ անձ» սոցիալական խմբի անդամի համար սահմանվել է 22 միավոր նախկին՝ 28 միավորի փոխարեն, ինչպես նաև «բացակա» կամ որևէ սոցիալական խումբ չունեցող անդամի համար սահմանվել է 17 միավոր՝ նախկին 18 միավորի փոխարեն: Միաժամանակ, գործազուրկի կարգավիճակ ձեռք բերող անձի համար նախատեսված սոցիալական խումբը ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվի է առնվում համապատասխան կարգավիճակը ստանալուց հետո՝ երեք ամիս անց: Նշված փոփոխությունները միտված են աշխատունակ անձանց այլընտրանքային՝ զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկելուն:

Պետական նպաստների նշանակման և վճարման գործընթացի վարչարարության բարելավմանն ուղղված փոփոխությունները վերաբերում են նախ և առաջ այն հանգամանքին, որ ավելացել են այն տվյալների թիվը, որոնք որևէ պետական նպաստի իրավունքի իրացման համար ընդունվում են դիմողի հայտարարությամբ, իսկ դրանց հավաստիությունը ստուգվում է առցանց եղանակով ձեռք բերված տվյալով:

Մասնավորապես, հարկ է նշել, որ առցանց եղանակով տվյալներ են ստացվում ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումներից (բնակչության կամ ընտանիքի կազմի մասին տվյալը), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և կադաստրային գույք արժեքի մասին տվյալները): Նշված երկու տվյալն օգտագործվում է անմիջականորեն ՄԱՏՄ-ների կողմից՝ իրենց առցանց հարցմանը տրված պատասխանի ձևով:

Առցանց են ստացվում նաև տվյալներ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություններից՝ ամսական պարբերականությամբ «Նորք» ՏՎԿ ՓԲԸ-ի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ. դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՄԱՏՄ-ներին, որոնք աշխատում են այդ ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկություն ներկայացնում ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքի կապակցությամբ:

Այս ուղղությամբ արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

Աղյուսակ 1. Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2011-2015թթ.

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	14.91	15.9	16.5	17.2	17.4
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	78.94	77.69	79.78	77.71	77.57
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	11.77	12.36	13.16	13.37	13.53
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքների թվից)	78.07	80.69	76.97	76.27	76.91
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	35.497	37.105	37.105	37.105	38.361
Նպաստառու ընտանիքների թիվ	91 575	96 309	102 570	104 130	105 408
Նպաստի միջին չափ (դրամ)	26 850	29 350	29 350	30 350	30 350

2015 թվականին շարունակվել է նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին՝ հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է էլնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

Սոցիալական, ընտանեկան նպաստների ինչպես նաև եռամսյակային հրատապ օգնության բազային մասը 2015 թվականին սահմանվել է 17 000 դրամ:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը:

Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է, սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1 000 դրամով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում սահմանվել են միանվագ հրատապ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքերում և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեցող չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության չափը սահմանվել է 50 հազար դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության չափը՝ 25 հազար դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ հրատապ օգնության չափը՝ 50 հազար դրամ: 2015 թվականին ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ հրատապ օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 5 036 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10 564 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 166 ընտանիքի:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով ՄԱՄ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: 2015 թվականին հրատապ օգնություն են ստացել միջինում 8 592 ընտանիք:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը՝ մինչև երեխայի երկու տարեկան դառնալը: 2009 թվականի հունվարի 1-ից մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը կազմում է 18 000 դրամ:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող նպաստառուների թիվը և նպաստների վճարմանը հատկացված ֆինանսական միջոցները 2012-2015թթ.

Տարիներ	2012թ.		2013թ.		2014թ.		2015թ.	
	Նպաստառուների միջին ամսական թվաքանակ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թվաքանակ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թվաքանակ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թվաքանակ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)
Ընդամենը	11 299	2.977	11 539	3.066	13 312	3.072	13 063	3.068

Ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով 2015 թվականին շարունակվել են նախորդ տարի սկսված օրենսդրական փոփոխությունները՝ ուղղված երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող պետական աջակցության ձևերի ու ծավալների արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես, էական փոփոխություններ են կատարվել երեխայի ծննդյան միանվագ վճար նշանակելուն և վճարելուն առնչվող իրավահարաբերություններում: Հիմք ընդունելով դրամագլխի օգտագործման ուղղությունների, ինչպես նաև քաղաքացիների դիմումների վերլուծությունները՝ ընդլայնվել են ընտանեկան դրամագլխի միջոցներն օգտագործելու ուղղությունները՝ դրանք կարող են օգտագործվել հաշվետիրոջ ծնողին կամ որդեգրողին գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1 000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում բնակարան կամ բնակելի տուն, կամ այլ անշարժ գույք գնելու համար:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ուղղությամբ 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

❖ *սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ռեեստրի ձևավորում, դրա պարբերական արդիականացման մեխանիզմների ներդրում.*

Հասարակական կազմակերպությունների քարտեզագրման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ մարզպետներին՝ մարզերում գործող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամք տրամադրող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ըստ ստացված տեղեկատվության՝ շուրջ 20 կազմակերպություն (անկախ իրավական-կազմակերպական տեսակից) տրամադրում է խնամք՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց:

Ձևավորվել է «Սոցիալական մեկ պատուհան» պորտալը (http://epension.am/am/one_window), որում արդեն իսկ տեղադրվել է սոցիալական ծառայություններ տրամադրող պետական կազմակերպությունների ցանկը: Իսկ հասարակական կազմակերպությունների քարտեզագրումից հետո կձևավորվի համապատասխան ռեեստրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք էջի «Համագործակցություն» բաժնում տեղադրվել է ընտանեկան բռնության գոհերին աջակցության տրամադրող կազմակերպությունների շտեմարանը:

❖ *Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների գործարկման իրավական հիմքի ապահովում.*

Այս նպատակով ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 10-ի «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 198-Ա որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի «Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միասնական ընդունարանները գործարկելու մասին» N 185-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի ««Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N582-Ն որոշումը,

- ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի նիստի «Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղություններին և կազմակերպման ձևերին ու սոցիալական համագործակցության ապահովմանն ուղղված իրականացվելիք գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» N 40 արձանագրային որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 1035-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 1061-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 1078-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանելու մասին» N 1069-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացների կազմակերպման և այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրերի տրամադրման դեպքերն ու կարգը հաստատելու մասին» N 1110-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի ներդրումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 47 արձանագրային որոշումը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի ապրիլի 7-ի «Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միասնական ընդունարանների գործարկումն ապահովելու մասին» N 62-Ա/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի «Սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 32-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N115-Ն հրամանը (որը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում 12.08.2015թ., պետական գրանցման թիվ N 11515358),
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 21-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ռեզիստրի ստեղծման և վարման կարգը հաստատելու մասին» N 120-Ա/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 22-ի «Սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմների մասին կարգը հաստատելու մասին» N 124-Ա/1 հրամանը,

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին տվյալները Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնելու մասին» N 125-Ս/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի «Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի տեքստը հաստատելու, պատասխանատու անձ նշանակելու և ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի ընդունմամբ պայմանավորված աշխատանքների կազմակերպման մասին» N 151-Ս/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները հաստատելու մասին» N 144-Ս/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի նոյեմբերի 23-ի «Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միասնական ընդունարաններում սոցիալական ծառայություններ տրամադրելու համար դիմումները ներկայացնելու (ընդունելու, հաշվառելու) և սոցիալական ծառայություններ տրամադրող համապատասխան մարմիններին փոխանցելու կարգը հաստատելու մասին» N 167-Ս/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի նոյեմբերի 30-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրի ձևը հաստատելու մասին» N 170-Ս/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրի ձևը սահմանելու մասին» N 172-Ս/1 հրամանը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի «Տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» N 175-Ս/1 հրամանը,

Բնույնագրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման շրջանակներում 2015 թվականի ընթացքում սոցիալական աշխատողների և դեպք վարողների համար պարբերաբար իրականացվել են մի շարք վերապատրաստման ծրագրեր, այդ թվում՝ «Սոցիալական աշխատանք», «Սոցիալական համագործակցություն» թեմաներով, առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել են «Վերապատրաստողների վերապատրաստում» դասընթացներ:

4. Սոցիալական պաշտպանություն

Հաշմանդամներ և տարեցներ

Հաշմանդամության բնագավառում իրականացրած քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և նրանց՝ հասարակական կյանքին լիակատար մասնակցություն ապահովելուն:

ՀՀ օրենսդրությունը ՄԱԿ-ի 2006 թվականի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանացնելու նպատակով 2015 թվականին մշակվել են մի շարք իրավական ակտեր: Մասնավորապես.

1. Լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար հիմունքներով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված, ինչպես նաև միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխան

քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմանների, հասարակության կյանքում նրանց հավասար մասնակցության և արդյունավետ սոցիալական ներառման ապահովումը:

2. ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1318-Ն որոշմամբ հաստատվել է «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը»:
3. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունվել է «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1527-Ն որոշումը:
4. 2015 թվականի դեկտեմբերի 24-ին հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրի կազմման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 1535-Ն ՀՀ կառավարության որոշումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ին հավանության արժանացած «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգի և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 1 արձանագրային որոշման՝ շարունակվում են աշխատանքները Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման ուղղությամբ:

2015 թվականին իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ, սայլակներ, լսողական սարքեր և այլ վերականգնողական պարագաներ:

Տեսողությունը կորցրած անձանց համար շարունակվել է հատուկ տառատեսակներով գրքերի և տետրերի տպագրման և «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը:

Համաֆինանսավորման միջոցով պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն» հասարակական կազմակերպությանը՝ մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող 50 դեռահասի և երիտասարդի սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 200 177 անձ, որից 7 730-ը՝ հաշմանդամ երեխա: Հաշմանդամություն ունեցող անձանցից 127 044-ը՝ կամ 63.4%-ը աշխատանքային տարիքի են:

Տարվա ընթացքում փորձաքննվել է 17 590 անձ, որից հաշմանդամ են ճանաչվել 15 664-ը՝ 89.0 %: Հաշմանդամ ճանաչվածներից 4.2%-ին սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ, 23.1%-ին՝ 2-րդ խումբ, 66.2%-ին՝ 3-րդ խումբ, իսկ 6.4%-ին՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Վերափորձաքննվել է 55585 անձ, որոնցից հաշմանդամ են ճանաչվել 53 999:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը: 2015 թվականին շարունակվել են աշխատանքները տարեցների սոցիալական պաշտպանության, խնամքի և սոցիալական ծառայությունների բարելավման և նրանց համար արժանապատիվ կենսապայմաններ ու արժանապատիվ ծերություն ապահովելու ուղղությամբ:

Տարվա ընթացքում մշակվել և ընդունվել են նաև մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

1. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին» N1078-

Ն որոշումը, որի կիրարկումը կնպաստի սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների գործունեության արդյունավետության և պատասխանատվության բարձրացմանը: Կազմակերպությունների հավաստագրումը նախատեսվում է իրականացնել 2017 թվականից:

2. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումը: Նշված որոշման ընդունման նպատակն է մեկ միասնական կարգում կանոնակարգել և տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների խնամքի տրամադրման գործընթացը:
3. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N1533-Ն որոշմամբ սահմանվում են շուրջօրյա խնամքի տուն հասկացությունը, շուրջօրյա խնամքի տներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի տրամադրման նպատակը և սկզբունքները, շուրջօրյա խնամքի տներին ներկայացվող ընդհանուր պահանջները, կարգավորվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի տներ ընդունելության և այնտեղից դուրսգրման, խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման, ինչպես նաև նրանց սոցիալական ներառմանն աջակցելու հետ կապված հարաբերությունները:

Շարունակվել են իրականացվել միջոցառումներ, որոնք նախատեսված են ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ին հավանության արժանացած «Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և դրա իրականացման 2012-2017թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 31 արձանագրային որոշմամբ:

- «Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակում միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող հինգ տուն-ինտերնատ` Երևանի N 1, Նորքի, Վարդենիսի նյարդահոգեբանական, Գյումրու տուն-ինտերնատները և «Չորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնը: Տուն-ինտերնատներում խնամվող 1 210 կենսաթոշակառուները գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:
- «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում» ծրագրով նախատեսված միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է մատուցում նախարարության համակարգում գործող «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկում է 1 500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառուի:
- «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրով Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություն են ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 30 անձ:
- «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» բազրի շրջանակում ՀՀ պետական բյուջեից «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամին հատկացվում է ֆինանսական միջոցներ` 100 անօթևան անձի ժամանակավոր (մինչև 90 օր ժամանակով) կացարան տրամադրելու և սոցիալական տարբեր ծառայություններ մատուցելու համար:

- «ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրով պետական աջակցություն է ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին հանրապետության 8 մարզերում 4 200 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում սպասարկող աշխատողների աշխատավարձը փոխհատուցելու համար:
- «Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրով Վանաձորի տարեցների տանը խնամվել է 55 կենսաթոշակառու:

Միաժամանակ, տարեցների իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և գործընկեր շահագրգիռ կազմակերպությունների (հատկապես՝ Հայկական Կարիտասի) նախաձեռնությամբ 2015 թվականի դեկտեմբերին հիմնադրվեց ՀՀ-ում տարեցների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրներով և խնամքի տրամադրմամբ զբաղվող պետական, հասարակական և մասնավոր կառույցների ցանց: Ցանցին անդամակցել են տարեցների հիմնահարցերով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպություններ:

Երեխաների հիմնահարցերի բնագավառ

2015 թվականին շարունակվել է ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես՝ կատարվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավման և սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովման, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացման, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավման աշխատանքներ:

Նախարարության համակարգում գործող՝ երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 660 երեխայի խնամքը, այդ թվում՝ շուրջ 450 երեխայի խնամքը՝ երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում: Թեև երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը հատուկ (մասնագիտացված) հաստատություններում:

Նախարարության համակարգի՝ երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատությունում մինչև 2015 թվականի հուլիս ամիսը խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 700 երեխա, որոնց խնամքը տարանջատվում է կրթությունից: Բարեփոխումներով պայմանավորված՝ 2015 թվականի հուլիս ամսից Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունը վերակազմակերպվել է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի: Տարեվերջին 7 հաստատությունում շուրջօրյա խնամք է ստացել 630 երեխա:

Նախարարության համակարգի՝ երեխաների սոցիալական հոգածության ցերեկային 3 կենտրոնները ծառայություններ են տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան շուրջ 270 երեխայի և նրանց ընտանիքներին: «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված առնվազն 250 երեխայի:

«Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան շուրջ 15 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք: Առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 20 երեխա խնամվել է խնամատար ընտանիքներում: